

ՍԱՂՄԱՐԱՆԸ
ԱՆՉՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՄԱԱԿ Կ. - Սաղմուն 70-89



Թարգմանեց ու խմբագրեց՝
ՄԱՇՏՈՑ ԿԱԶԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղապարեան

ՍԱՂՄՈՍԱՐԱՆԸ
ԱՆՁՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅ
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՍԱՂՄՈՍ 70 [69]

Հոսապիր օգնելու ինձ, Տէր

Կցորդ. Հոգին եւ Հարսը ստոմբ են. «Ե՛կ»:

Եւ ով լսում է, թողասի. «Ե՛կ» (Յյտ 22, 17):

Կամ. Մենք կարող ենք վարածութեամբ ասել.

«Տէրն իմ օգնականն է, շեմ վախենայ» (Եբր 13, 6):

Կամ. Տէրը կ'ազարի ինչ ամէն շարիճից

եւ կը փրկի ինչ Իր երկնային արվայութեան Համար (2Տմ 4, 18):

Կամ. Մարանա թճա. Տէր, ե՛կ:

Տէր Յիսուսն շնորհը թողչեզ Հեթ լինի (Հմմտ. 1Կր 16, 22-23):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Դառնի: Յիշատակելու համար:**

² Աստուած, օգնութեան հասիր ինձ,
շտապիր օգնելու ինձ, Տէր.

³ Թող խոնարհուեն եւ ամօթով մնան,
ովքեր դաւադրում են իմ կեանքի դէմ:

Թող ետ ընկրկեն, ամօթով ծածկուած,
ովքեր չարիք են կամենում ինձ.

⁴ շփոթուած՝ ետ վերադառնան,
ովքեր հռչակում են. «Քեզ լաւ է այսպէս»:

⁵ Թող բերկրեն եւ ցնծան Քեզնում,
բոլոր նրանք՝ ովքեր փնտռում են Քեզ.
Թող միշտ ասեն. «Աստուած մեծ է»,
պարգեւածը փրկութեան սիրահարները:

⁶ Ես մի աղքատ եմ, մի նուաստացած,
ո՛վ Աստուած, ե՛կ շուտով.
Դու ես իմ օգնութիւնն ու իմ ազատարարը,
Տէր իմ, մի՛ ուշացիր:



ՍԱՂՄՈՍ 71 [70]

Երբ հասնի ծերութիւնը, մի՛ լիիր ինձ

Կցորդ. Ես Գիտեմ՝ թե ո՞ւմ եմ Հաւատացել:

Մա կը պաշտանի իմ ասանդը մինչեւ այն օրը (Հմմտ. 2Տմ 1, 12):

Կամ. Մենք երանելի ենք Հոշակո՞ւմ նրանց՝ ովքեր յարատեւել են (ՅԿբ 5, 11):

Կամ. Բարի պարեալ մղեցի, ընթացիս ասարիցի, Հաւատիս պաշտանեցի (2Տմ 4, 7):

կամ. Ով մինչեւ վերջ կը յարաբերե՛ր, նա կը փրկու՛ն (Մտթ 24, 13):

կամ. Տէրը կերպարանափոխելու՝ է մեր թշուառութեան մարմինը,
կերպարանակից դարձնելու՝ Համար Իր փառաւոր մարմինն (Հմմտ. Փլպ 3, 21):

կամ. Ամենակարողը մե՞ծ գործեր կատարեց ինչնո՞ւմ, է՝ Սուրբ Էջրա Անունը (Ղկս 1, 49):

¹ Քեզ եմ ապաւինում, Տէր,
թող ընդմիշտ ամօթով չմնամ.

² արդարութեանդ համաձայն՝ ազատիր ինձ եւ պաշտպանիր,
մօտեցրու ինձ ահանջդ եւ փրկիր ինձ:

³ Եղիր ինձ համար մի վէճ, որ ընդունում է ինձ,
մի օթեւան միշտ հասանելի.
որոշել ես փրկութիւն պարգեւել ինձ,
Դու ես իմ ժայռն ու իմ ամրոցը:

⁴ Ամբարիշտի ձեռքից ազատիր ինձ, Աստուած իմ,
այլասերուածի ու բռնաւորի գրաւումից.

⁵ Դու ես, Տէր Աստուած, իմ յոյսը,
երիտասարդութիւնիցս ի վեր՝ Դու ես իմ յենարանը:

⁶ Մայրական արգանդում արդէն Քեզ էի վստահում,
մօրս ծոցում Դու էիր իմ պաշտպանը.
յաւիտեան Դու ես լինելու իմ գովքը:

⁷ Շատերին մի հրաշք թուացի,
բայց Դու ես իմ օգնութիւնն ու իմ ուժը.

⁸ բերանս լի է Քո գովասանքով,
ամբողջ օրը՝ Քո փառքով.

⁹ ծերութիւնը հասած՝ մի՛ մերժիր ինձ,
երբ պակասում են ուժերը, մի՛ լքիր ինձ:

¹⁰ Թշնամիներս խօսում են իմ դէմ,
ովքեր լրտեսում են ինձ, միասին դաւադրում են.

¹¹ ասում են. «Աստուած նրան լքել է, հետապնդեցէք նրան,
չտապեցէք, չունի մէկը՝ որ ազատի նրան»:

¹² Ո՛վ Աստուած, հեռու մի՛ մնա,
Աստուած իմ, շուտով հասիր ինձ օգնութեան.

¹³ Թող շփոթութեան մատնուեն եւ ոչնչացուեն նրանք՝
ովքեր դաւեր են նիւթում իմ կեանքի դէմ.
ամօթով ու անարգութեամբ թող պատուեն՝
ովքեր փնտռում են իմ դժբախտութիւնը:



¹⁴ Ես չեմ դադարում յուսալ եւ գովել Քեզ,

¹⁵ բերանս հռչակում է Քո արդարութիւնը,
ամբողջ օրը՝ փրկութեան Քո գործերը.
դրանք անքանակ են եւ չեմ կարողանում հաշուել:

¹⁶ Վերապրում եմ Քո սքանչելիքները, Տէր Աստուած, միայն Քո արդարութիւնն եմ մտաբերում:

¹⁷ Երիտասարդութիւնիցս ի վեր՝ Դու կրթում ես ինձ, Աստուած, մինչեւ այսօր ես հռչակում եմ Քո հրաշքները:

¹⁸ Հասել են ծերութիւնն ու սպիտակ մազերը, ո՛վ Աստուած, ինձ մի՛ լքիր. նրան՝ ով գալիս է, կ'աւետեմ Քո զօրութիւնը, ապագայ սերունդին՝ Քո հրաշագործութիւնները:

¹⁹ Արդարութիւնդ, Աստուած, հասնում է մինչեւ երկինք, Դու ես՝ որ կատարում ես մեծագործութիւններ. ո՛վ Աստուած, ո՞վ է Քեզ նման:

²⁰ Անցկացրիր ինձ բազում փորձութիւնների միջով, բայց Դու ես լինելով՝ որ վերապրեցնելու ես ինձ, երկրի խորքերից բարձրացնելու ես ինձ:

²¹ Ինձ վեր կը բարձրացնես, ինձ աւելի մեծ դարձնելու համար, կրկին Դու կը լինես ինձ մխիթարողը:

²² Թաւիղի վրայ կը դաւանեմ հաւատարմութիւնդ, Աստուած, քնարի վրայ կ'երգեմ Քեզ համար, Սուրբդ Իսրայէլի:

²³ Շուրթերս երգելու են Քո համար, որովհետեւ Դու փրկեցիր իմ կեանքը:

²⁴ Լեզուս, ամբողջ օրուայ ընթացքում, խորհրդածելու է արդարութեանդ գործերը. որովհետեւ նրանք՝ ովքեր չարիք են կամենում ինձ, ամօթահար են մնալու ու ստորացած:



ԱՊՂԱՌՈՒ 72 [71]

Արեւից ասաջ՝ «Բողոք» Է Նրա Անունը

Կցորդ. Ըյոօր յեղհամար մի փրկիչ թնօւեց, որ Ինձը Քրիստոս Տէրն է (ՂԿս 2, 11):

կամ. Սաւե-Հեթանոսներին Աստուած գարշ շնորհեց,
որպէսպի ունենան կեանքը (Հմմտ. Գրծ 11, 18):

կամ. Քրիստոս ամէն ինչից վեր է, յաւիտեանս օրհնեալ Աստուած (Հմմտ. Հռմ 9, 5):

¹ **Սողոմոնի:**

Աստուած, Մեսիա Թագաւորին վստահիր դատաստանդ, արդարութիւնդ՝ Թագաւորի որդուն:

² Թող կառավարի ժողովուրդդ արդարութեամբ, եւ աղքատներիդ՝ ըստ իրաւունքի:

³ Լեռները ժողովրդին թող խաղաղութիւն բերեն, բլուրները՝ բերեն արդարութիւն:

⁴ Նա թող պաշտպանի իր ժողովրդի աղքատներին, փրկի խոնարհներին եւ ջախջախի կեղեքողներին:

⁵ Նրանից կ'երկնչեն արեւի եւ լուսնի ներքոյ,
սերնդից սերունդ՝ յաւիտեանս յաւիտենից.

⁶ անձրեւի նման կ'իջնի գեղմի վրայ,
ինչպէս ցօղը, որ թրջում է երկիրը:

⁷ Նրա օրոք կը ծաղկի արդարութիւնը,
բազում խաղաղութիւն՝ անթիւ ամիսներ շարունակ.

⁸ կ'իշխի մէկ ծովից մինչեւ միւս ծովը,
եւ Գետից մինչեւ աշխարհի սահմանները:

⁹ Քոչուոր հովիւները երկրպագելու են նրա առաջ,
նրա թշնամիները ծամելու են գետնի փոշին.

¹⁰ Թարսիսի եւ կղզիների թագաւորները
գալու են՝ բերելու իրենց նուէրները:

Սաբայի եւ Սէբայի թագաւորները
գալու են՝ բերելու իրենց ընծաները.

¹¹ բոլոր թագաւորները երկրպագելու են նրա առաջ,
նրան ծառայելու են բոլոր ժողովուրդները:

¹² Նա կ'ազատի աղքատին, որն աղաղակում է,
խեղձին, որը պաշտպան չունի.

¹³ հոգատարութիւն կ'ունենայ տկարի ու կարիքաւորի հանդէպ,
կը փրկի հարստահարուածների կեանքը.

¹⁴ նրանց կ'ազատագրի բռնութիւնից ու կեղեքումից,
նրանց արիւնը թանկարժէք է իր աչքերի առաջ:

¹⁵ կէցցէ նա. նրան կը տրուի Սաբայի ոսկին,
նրա համար կ'աղօթեն անդադար,
ամէն օր նա կ'օրհնուի:

¹⁶ Յորենը առատանալու է երկրի վրայ,
ծփալու է սարերի գագաթներին.
Նրա հասկերը ուռճացած՝ ինչպէս Լիբանանը,
նրա հունձքը՝ ինչպէս երկրի խոտը:

¹⁷ Նրա Անունը տեւելու է յաւէտ,
արեւից առաջ՝ «Բողբոջ» է իր Անունը.
Նրանով են օրհնուելու բոլոր ժողովուրդները
եւ նրանք երանելի են ասուելու:

¹⁸ Օրհնեալ է Տէր Աստուած, Աստուած Իսրայէլի,
միայն Նա է հրաշքներ գործում.

¹⁹ յաւէտ օրհնեալ է փառքի Իր Անունը,
ամբողջ երկիրը թող լցուի Իր փառքով:

Ամէն: Ամէն:

²⁰ *Աւարտում են Դատի՛ Յեսաի որդու աղօթքները:*



Վերջ Սաղմոսների Երկրորդ Գրքի



- Կցորդ. Աշխարհն անցնում է իր Գոռոպո-թեամբ ,
 Բայց ով կարարում է Աստուծոյ կամփը՝ մնում է յա-խրեան (1Յվզ 2, 17):*
- կամ. Աստուծոյ ընդհանրաց աշխարհի ազդեացնելին , նրանց Հասարակօվ Հարո-սոյ
 է-արվայո-թեան Ժառանգորդ-դարձնելու-Համար (Հմմտ. Յկբ 2, 5):*
- կամ. Տեսանելի իրականութիւնները վայրկեանական են ,
 անտեսանելիները՝ յա-խրեանական (2Կր 4, 18):*
- կամ. Ով Գործաշո-մ է աշխարհը , Խողայնպէս վարո-ի՝ որ կարծես թէ չի Գործաշո-մ ,
 որովհետե-այս աշխարհի արեսարանը անցնում է (1Կր 7, 31):*
- կամ. Երանի սրբով մամո-րներին , որովհետե- նրանի վեանելու- են Աստուծո-ն (Մտթ 5, 8):*

¹ *Մաղմոս: Աստուծոյ:*

*Աստուծոյ իսկապէս բարի է Իսրայէլի նկատմամբ,
մարդկանց նկատմամբ, որ մաքուր են սրտով.*

² *բայց քիչ էր մնացել, որ ոտքերս շեղուէին
եւ գրեթէ սասանուում էին իմ քայլերը.*

³ *քանի որ նախանձում էի պարծենկոտներին,
տեսնելով չարագործներ յաջողութիւնները:*

⁴ *Մինչեւ մահ՝ չեն գտնում խոչընդոտներ
եւ վայելում են կատարեալ առողջութիւն.*

⁵ *չեն ճանաչում մարդկային յոգնութիւնը,
չեն հարուածում ինչպէս միւս մահկանացուները:*

⁶ *Հպարտութիւնը գրկում է նրանց ինչպէս վզնոց,
բռնութիւնը պատում է նրանց ինչպէս հագուստ.*

⁷ *նրանց աչքը փայլում է բարօրութեամբ,
նրանց սրտից առատօրէն թափում են ցանկութիւնները:*

⁸ *Ծաղրում են եւ ծրագրում են չարիք,
վերելից սպառնում են գոռոզութեամբ.*

⁹ *իրենց բերանը բարձրացնում են մինչեւ երկինք,
իրենց լեզուն գայթակղեցնում է երկիրը:*

¹⁰ *Սրա համար է ժողովուրդը նրանց հետեւում,
խմելու համար ճոխութեան աղբիւրից.*

¹¹ *նրանք մտածում են. «Բայց Աստուծոյ կարո՞ղ է իմանալ,
ճանաչողութիւն ունի՞ր Բարձրեալը».*

¹² *ահա, սրանք են ամբարիշտները,
մշտապէս անվնաս՝ բազմապատկում են յաջողութիւնը:*



¹³ *Մի՞թէ ի գուր սիրտս մաքուր պահեցի,
անմեղութեան մէջ լուացի ձեռքերս.*

¹⁴ *ինչո՞ւ եմ ամբողջ օրը խրախուսում ինքս ինձ,
ուղղում եմ ինքս ինձ առաւօտից ի վեր.*

¹⁵ Բայց եթէ ասէի. «Վարուելու եմ նրանց պէս»,
կը դաւաճանէի որդիներիդ սերնդին:

¹⁶ Յայնժամ խորհրդածեցի՝ ըմբռնելու համար,
թէ ի՞նչ յոգնութիւն ծանր թուաց աչքերիս առաջ,
¹⁷ մինչեւ որ մտայ Աստծոյ դաղտնիքներից ներս
եւ հասկացայ ինչպիսին է լինելու նրանց վախճանը.
¹⁸ նրանց դրել ես սայթաքեցուցիչ վայրերի վրայ
եւ նրանց արդէն իսկ քաշում ես դէպի կործանում:

¹⁹ Ահա նրանք սարսափում են մէկ վայրկեանում,
վերջացած, սպառուած են վախից.

²⁰ ինչպէս երազը զարթնումի պահին, Տէր,
առաւօտեան անէացնում ես նրանց կերպարանքը:

²¹ Սիրտս կարծրացել էր
եւ տառապում էի ներաշխարհումս.

²² իսկապէս յիմար էի եւ չէի հասկանում,
Քո առաջ նման էի անասուն կենդանու:



²³ Բայց ես միշտ մնում եմ Քեզ հետ,
իսկ Դու բռնել ես իմ ձեռքը.

²⁴ առաջնորդում ես ինձ ծրագրերիդ համաձայն,
իսկ յետոյ՝ ընդունելու ես ինձ փառքիդ մէջ:

²⁵ Ուրիշ ո՞ւմ ինձ համար կ'ունենամ երկնքում:
Քեզ հետ, ուրիշ ոչինչ չեմ փափաքում երկրի վրայ.

²⁶ Եթէ մարմինս ու սիրտս սպառուում են,
Աստուած իմ բաժինն է, վէմը իմ սրտի:

²⁷ Ով հեռանում է Քեզնից, մոլորւում է,
Դու կործանում ես անհաւատարիմ դարձողներին.

²⁸ ինձ համար բարիքը Աստծոյ մօտ մնալն է,
Տէր Աստծոյ վրայ իմ յոյսը դնելը
եւ Իր բոլոր գործերը պատմելը:



ԱՊՂԱՌԱ 74 [73]

Ոչ մէկ մարգարէ այլեւս չկայ

Կցորդ. Հաւածո-աժ Են՛վ, Բայց Լի՛ո-աժ չԵն՛վ.

մեր մարմիններում կրոն-մ էն՛վ Յիսոսի մահը (Հմմտ. 2Կր 4, 9-10):

Կամ. Ընցել են մե՞ծ նեղո-թեան մեջ ո՛վ,

իրենց զբեռոյնները Լո-ացել են Գառ-ան արեան մեջ (Հմմտ. Յյտ 7, 14):

Կամ. Երո-սաղեմը ողորակո՞ւ է արո-ւելո-ւ Ընթանոսներին կողմից,

մինչեւ որ կը լրանան Ընթանոսներին ժամանակները (Ղկս 21, 24):

կամ. Մին՝ վախեցե՛վ նրանցից, ո՛վ չէր սպանու՛մ էն մարմինը,
բայց չէն կարող սպանել Հոգին (Մտթ 10, 28):

կամ. Մին չէ՛- ե՞րբ, Տէր, Դո՛ւ՝ որ սո՛րբ ես ե- ճշմարիտ,
արդարո՞ւթի-ն չէս անի ե- չէս առնի մեր արեան վրեժը (Յյտ 6, 10):

¹ *Մասփիլ: Աստի:*

Ինչո՞ւ ես, Աստուած, մերժում մեզ ընդմիջտ,
զայրանում ես ընդդէմ արօտավայրիդ հօտի.

² յիշիր հին ժամանակներում ձեռքբերածդ ժողովուրդը,
տոհմը, որին ազատագրեցիր որպէս Քո ժառանգութիւն,
Սիոն լեռը, ուր հաստատեցիր բնակութիւն:

³ Քայլերդ ուղղում ես դէպի անվախճան կործանումներ,
թշնամին ջարդի ենթարկեց Սրբավայրը.

⁴ ժողովարանում մռնչաց հակառակորդը,
որպէս նշան տնկեց իր դրօշը:

⁵ Բարձրացնում էին կացինը ինչպէս խուլ անտառում,

⁶ տապարներով ու մուրճերով կոտորում էին դռները.

⁷ Սրբավայրդ կրակի բոցերին էին մատնում,
պղծում էին ու քանդում Անուանդ օթեւանը:

⁸ Միմեանց միջեւ ասում էին. «Յառա՛ջ, կործանենք դրանք»,
այրում էին Աստծոյ հետ հանդիպման վայրերը.

⁹ նշաններ այլեւս չենք տեսնում, ոչ մէկ մարգարէ այլեւս չկայ,
եւ մեր մէջ չկայ մէկը՝ որ իմանայ՝ թէ մինչեւ երբ:

¹⁰ Մինչե՞ւ երբ, Աստուած, պիտի հայհոյի հակառակորդը,
ընդմիջտ պիտի նախատի թշնամին Քո Անունը.

¹¹ Ինչո՞ւ ես քաշուած պահում ձեռքդ,
թաքցնում ես աջդ ծոցիդ ներսում:



¹² Բայց Դու, ո՛վ Աստուած, ի յաւիտենից իմ Թագաւորն ես,
երկրի երեսին կատարւող փրկութիւնների հեղինակը.

¹³ Դու կիսեցիր ծովը զօրութեամբ,
վիշապների գլուխը ճգմեցիր ջրերի վրայ:

¹⁴ Դու փշրեցիր Լէվիաթանի գլուխը,
նրան որպէս կերակուր տուիր ծովի հրէշներին.

¹⁵ աղբիւրներ ու վտակներ բխեցրիր,
ցամաքեցրիր մշտնջենաւոր գետերը:

¹⁶ Քեզ են պատկանում ցերեկն ու գիշերը,
Դու հաստատեցիր արեւն ու լուսինը.

¹⁷ գծեցիր երկրի սահմանները,
կամեցար ձմեռն ու ամառը:

¹⁸ Տէր, յիշիր. թշնամին հայհոյում է,
մի անմիտ ժողովուրդ նախատում է Քո Անունը.

¹⁹ տատրակիդ կեանքը գազաններին մի՛ յանձնիր,
ընդմիշտ մի՛ մոռացիր Քո աղքատների կեանքը:

²⁰ Հայիր Քո դաշինքին. չափը լցուած է,
երկրի քարանձաւները ապաստան են բռնութիւնից.

²¹ ճնշուածը թող ընդմիշտ ընկճուած չմնայ,
աղքատն ու խեղճը թող գովեն Քո Անունը:

²² Ոտքի ել, ո՛վ Աստուած, մղիր Քո պատերազմը,
յիշիր այս խենթերին, որ կրկնում են հայհոյանքներ.

²³ մի՛ մոռացիր հակառակորդներիդ շաչիւնը,
թշնամու խռովութիւնը, որ աճում է անվերջ:



ԱՊՂԱՌԱ 75 [74]

Աստուծոց Է գալիս դատաստանը

Կցորդ. Աստուած Գաւերից վար նեղեց Բզորներին

Եւ Բարձրացրեց խոնարհներին (Համտ. Ղկս 1, 52):

Կամ. Այո՛, վերադարձն մօտ է եւ ինչ Բեդ Բերում եմ Բարոցումը (Յյտ 22, 12):

Կամ. Երկնչէ՛վ Աստուծոց եւ վառէ՛ր դուրսը Սրան,
որովհետեւ Բասելէ Սրա դարասրանի ժամը (Յյտ 14, 7):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Մի՛ կործանիր:**

Սաղմոս: Ասափի: Երգ:

² Երախտագիտութիւն ենք յայտնում Քեզ, Աստուած,

երախտագիտութիւն ենք յայտնում Քեզ.

մօտիկ է մեզ Քո Անունը,

հռչակում են Քո սքանչելիքները:

³ «Այո՛, այն ժամին՝ որ սահմանել եմ,

ես կը դատեմ արդարութեամբ.

⁴ թող ցնցուի երկիրն իր բնակիչներով,

ես հաստատուն եմ պահում նրա հիմքերը:

⁵ Գոռոզներին յայտարարում եմ. «Արդ բաւական է»,

ամբարիշտներին. «Մի՛ բարձրացրէք ձեր երեսը».

⁶ ձեր ճակատը դէպի Բարձրեալը մի՛ բարձրացրէք,

մի՛ խօսէք զոռոզ սրտով»:

⁷ Ո՛չ արեւելքից եւ ո՛չ էլ արեւմուտքից,

ո՛չ անապատից եւ ո՛չ էլ լեռներից,

⁸ այլ Աստուծոց է գալիս դատաստանը,

միայն նա է ցածրացնում եւ բարձրացնում:

⁹ Տէրն իր ձեռքում մի գաւաթ ունի,

որը լի է համեմուած գինիով.

այն թափում է երկրի ամբարիշտների վրայ,
նրանք այն խմելու են մինչեւ տակի մրուրը:

¹⁰ Բայց ես միշտ աւետելու եմ,
երգելով Յակոբի Աստծուն.

¹¹ «Կքելու եմ ամբարիշտների երեսները,
արդարների երեսներն են բարձրանալու»:



ԱՊՂԱՌՈՒ 76 [75]

Աստուած ուսփի է կանգնում դատաստանի համար

Կցորդ. Տեանելու- են մարդո- Որդո- Գալու-սոր ամպերի վրայով,
Կօրո-թեամբ է- մեծ փառ-վով (Հմմտ. Մտթ 24, 30):

Կամ. Ես եմ աշխարհի լոյսը. ով հեղե-ո-մ է ինչ, խա-արո-մ չի խարխափի (Յվհ 8, 12):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Լարային գործիքների վրայ:
Սաղմոս: Ասափի: Երգ:**

² Աստուած ճանաչուած է Յուդայի ժողովրդի մօտ,
Իսրայէլում մեծ է նրա Անունը.

³ Սաղէմում հաստատել է Իր վրանը,
Սիոնում սահմանել է Իր բնակութիւնը.

⁴ այնտեղ փշրել է աղեղի նետերը,
վահանը, սուրը եւ պատերազմը:

⁵ Լոյսով փայլում ես Դու եւ հիանալի ես
յաւիտենական լեռների բարձունքին.

⁶ մերկացուեցին հզօրները, որ ննջում էին,
ուզամիկները կրկին անշարժ են.

⁷ սպառնալիքներիդ ի լուր, Աստուած Յակոբի,
անշարժութեան են մատնուել կառքերն ու նժոյգները:

⁸ Դու ահարկու ես: Ո՞վ կարող է դիմանալ հայեացքիդ,
երբ սանձազերծում է զայրոյթդ.

⁹ երկնքից Դու արտասանում ես մի վճիռ,
երկիրը երկիւղով լռում է.

¹⁰ Աստուած ինքն է, որ ոտքի է կանգնում դատաստանի համար,
փրկելու համար երկրի բոլոր խոնարհներին:

¹¹ Մարդու բարկութիւնը նոյնպէս Քեզ փառաւորում է,
ով նրանից խուսափում է, ուրախ շրջապատում է Քեզ.

¹² Տէր Աստծուն ուխտեր արէք եւ կատարեցէք,
ով նրան մօտիկ է կանգնած, թող պարգեւներ բերի Ահարկուին.

¹³ Նա խլում է հզօրների շունչը,
սարսափ է ազդում երկրին իշխողների վրայ:



Կցորդ. Յիսուս նրանց մօտ եկաւ, խոյլելով ջրերի վրայով.
Բայց երբ աշակերտները նրան գտաւն, սարսափեցին (Հմմտ. Մտթ 14, 25-26):

¹⁴ Ո՛վ Աստուած, Քո ճանապարհը սրբութիւնն է,
ո՞ր մէկ աստուածն է Աստծոյ չափ մեծ.
¹⁵ Դու Աստուածն ես, որ հրաշքներ է կատարում,
ժողովուրդների մէջ յայտնի ես դարձնում զօրութիւնդ.
¹⁶ քաղուկովդ ազատագրեցիր ժողովուրդդ,
Յակոբի եւ Յովսէփի սերունդը:

¹⁷ Զրերը Քեզ տեսնելով, ո՛վ Աստուած,
ջրերը Քեզ տեսնելով խռովուեցին,
սասանուեցին նաեւ անդունդները.

¹⁸ ամպերը ջուր հեղեցին,
երկինքը պռոթկաց ամպրոպներով,
արագ թրթռում են կայծակներդ:

¹⁹ Քո որոտման շառաչի ձայնին,
կայծակներդ լուսաւորեցին աշխարհը,
երկիրը դողաց ու խռովուեց:

²⁰ Քո ընթացքը ծովի վրայով, Քո ճանապարհը ջրերի վրայով,
Քո հետքերն անտեսանելի մնացին.

²¹ առաջնորդեցիր ժողովուրդդ որպէս երամակ,
Մովսէսի եւ Ահարոնի ձեռքով:



ԱՂԱՄՈՒ 78 [77]

Լսիր Իմ օրէնքը

¹ Մասփի: Ասափի:

Կցորդ. Թէեւ Յիսուս Բաղդամն շաններ էր կտրարել,
ժողովուրդը Նրան չէր հաւատում (Հմմտ. Յվհ 12, 37):
Կամ. Անճնարին է, որ ոմանց անհաւատութիւնը
կարողանայ ջնջել Աստծոյ հաւատարմութիւնը (Հմմտ. Հում 3, 3-4):
Կամ. Այս Բաները նրանց պարահեցին որպէս օրինակ,
որպէս ուսուցում գրուեցին մեր Համար (Հմմտ. 1Կր 10, 11):
Կամ. Հարկաւոր է՝ որ առաւելագոյնս յարենք խօսեցին, որ Լսեցինք (Հմմտ. Եբր 2, 1):

Լսիր, ժողովուրդ Իմ, Իմ օրէնքը,
ականջ դիր բերանիս խօսքերին.

² Բերանս բացելու եմ առականերով,
վերլիչելու եմ անցեալի առեղծուածները:

³ Այն՝ ինչ լսեցինք եւ իմացանք,
ինչ մեր հայրերը պատմեցին մեզ.

⁴ դրանք չենք թաքցնելու մեր որդիներին,
դրանք ււանդելու ենք ապագայ սերունդին.
Տիրող օրհնութիւններն ու զօրութիւնը,
սքանչելիքները, որ Նա կատարեց:

⁵ Յակոբի մօտ մի վկայութիւն դրեց,
մի օրէնք հաստատեց Իսրայէլում.
մի օրէնք, որ մեր հայրերին հրամայում էր
այս բաներն ուսուցանել իրենց որդիներին.

⁶ որպէսզի սրանք իմանայ սերունդը, որ գալիս է,
եւ նրանց ապագայ որդիները:

Թող վեր կենան՝ պատմելու իրենց որդիներին,

⁷ որպէսզի Աստծոյ մէջ հաստատեն իրենց հաւատքը.
որպէսզի չմոռանան Աստծոյ հրաշքները
եւ ամբողջութեամբ կատարեն Նրա կամքը:

⁸ Որպէսզի չլինեն իրենց հայրերի նման,
մի այլասերուած ու ապստամբ սերունդ.
մի սերունդ, որի սիրտն անյարատեւ է,
որի հոգին անհաւատարիմ է Աստծուն:

⁹ Այնուամենայնիւ, Եփրեմի որդիները, աղեղներով զինուած,
փախան՝ պատերազմի օրը.

¹⁰ չպահպանեցին Աստծոյ դաշինքը,
մերժեցին հետեւել Նրա օրէնքին.

¹¹ մոռանալով Նրա սքանչելիքները,
հրաշքները, որոնց ականատես վկաներն էին:



¹² Աստուած մի հրաշք կատարեց նրանց հայրերի առաջ,
Եփրատոսում, Տայանի երկրում.

¹³ բաժանեց ծովը եւ միջով նրանց անցկացրեց,
ջրերն ամբարտակի նման կանգնեցնելով.

¹⁴ ցերեկն առաջնորդեց նրանց ամպով,
գիշերը՝ կրակի լոյսով:

¹⁵ Հարուածեց ժայռին անապատում,
ստորգետնեայ ջրերով յագեցրեց նրանց.

¹⁶ քարից վտակներ բխեցրեց
եւ յորդառատ հոսեցրեց ջուրը:

¹⁷ Բայց Նրա դէմ շարունակեցին մեղանչել,
անապատում ապստամբեցին Բարձրեալի դէմ.

¹⁸ իրենց սրտերում փորձեցին Աստծուն,
ցանկասիրութեամբ սնունդ պահանջելով:

¹⁹ Տրտնջացին Աստծոյ դէմ, ասելով.
«Աստուած կարո՞ղ է մեզ համար սեղան պատրաստել անապատում.

²⁰ անշուշտ, հարուածեց ժայռին
եւ ջուրն առատօրէն բխեց.
Բայց մի՞թէ կարող է մեզ հաց տալ,
միս հայթայթել իր ժողովրդի համար»:

²¹ Սրա համար էլ, Տէրը լսեց եւ զայրացաւ,
մի կրակ բորբոքուեց Յակոբի դէմ,
Նրա բարկութիւնը բարձրացաւ ընդդէմ Իսրայէլի.

²² քանի որ չէին հաւատում Աստծուն,
Նրանից յոյս չունէին ստանալու փրկութիւնը:

²³ Հրամայեց վերին ամպերին
եւ բացեց երկնքի դռները.

²⁴ նրանց կերակրելու համար՝ մանանան տեղաց,
հացը տուեց նրանց երկնքից.

²⁵ եւ մարդը կերաւ հրեշտակների հացը,
սնունդ ունեցաւ ամենայն լիութեամբ:

²⁶ Երկնքից մղեց արեւելեան քամին,
հարաւի ուժեղ քամին արթնացրեց.

²⁷ առատ միս անձրեւել տուեց,
ծովի աւազի չափ բազմաթիւ թռչուններ:

²⁸ Ընկնում էին նրանց բանակատեղի մէջ,
նրանց վրանների չորսկողմը.

²⁹ կերան յագենալու չափ,
Աստուած գոհացրեց նրանց բոլոր ցանկութիւնները:

³⁰ Բայց նրանք ազա՛հ մնացին,
կերակուրը դեռ իրենց բերանում.

³¹ յայնժամ Աստծոյ բարկութիւնը ելաւ նրանց վրայ,
որ կոտորեց ամենահզօրներին,
ջարգելով Իսրայէլի լաւագոյններին:



³² Այնուամենայնիւ, վերսկսեցին մեղանչել,
չէին հաւատում Նրա հրաշքներին.

³³ Նա ծուխի նման ցիրուցան էր անում նրանց օրերը,
նրանց տարիները՝ յանկարծակի պատուհասներով:

³⁴ Երբ Աստուած նրանց հարուածում էր, փնտուում էին Նրան,
դարձի էին գալիս եւ դիմում Նրան.

³⁵ յիշում էին, որ Աստուած իրենց վէմն է,
Աստուած, Բարձրեալը, իրենց փրկիչը:

³⁶ Բերանով աշխատում էին քծնել,
լեզուի խօսքերով ստում էին Նրան.

³⁷ նրանց սիրտը հաստատուած չէր նրանում,
Նրա դաշինքին հաւատարիմ չէին:

³⁸ Բայց Նա, ըստ Իր մեծ ողորմութեան,
չէր ոչնչացնում նրանց, այլ ներում էր յանցանքը.
Բազում անգամներ զսպեց Իր բարկութիւնը,
Իր ցասումը սանձազերծելու փոխարէն.

³⁹ յիշում էր, որ նրանք մարմին են,
չունչ, որ անցնում է եւ չի վերագառնում:

ՅՈՒՅՈՒՅՈՒՅՈՒՅ

78ր

Կրկին փորձեցին Աստծուն

Կցորդ. Մեր Հայրերը խմբում էին մի ժայռից,
Եւ այդ ժայռը Քրիստոս Ինչն էր (Հմմտ. 1 Կր 10, 4):

Կամ. Աստուած մեր Համար փրկութեան
մի ուշ յարուցեց Պաշտի՝ Իր ժառանգի փանը (Հմմտ. Ղկս 1, 69):

Կամ. Աստուած նրան փառս է Պաշտի՝ Իր Հօր Բաճը,
Եւ նա յաւիտեան թագաւորելու է Յակոբի փան վրայ (Հմմտ. Ղկս 1, 32-33):

⁴⁰ Քանի՜ անգամ ապստամբեցին անապատում,
դառնացնելով Նրան միայնութեան այն տափաստաններում.

⁴¹ կրկին փորձում էին Աստծուն,
համբերութիւնից հանում էին Իսրայէլի Սրբին.

⁴² այլեւս չէին յիշում Նրա ձեռքը,
ստրկութիւնից ազատագրուելու օրը:

⁴³ Իր նշաններով հարուածեց Եգիպտոսին,
Իր հրաշքներով՝ Տայանի երկիրը.

⁴⁴ արեան փոխեց նրանց գետերը,
աղբիւրները, որպէսզի չկարողանային խմել:

⁴⁵ Բզեզներ ուղարկեց լափելու
եւ ներխուժող գորտեր՝ ապականելու.

⁴⁶ բերքը յանձնեց թրթուռներին,
աշխատանքի արդիւնքը՝ մարախին.

⁴⁷ կարկուտով փչացրեց նրանց խաղողի այգիները,
նրանց պտուղները՝ յանկարծադէպ ցրտով:

⁴⁸ Նախիրները կարկուտին մատնեց,
կայծակներին՝ նրանց բոլոր երամակները.

⁴⁹ սանձազերծեց Իր բոցավառ ցասումը,
զայրոյթը, բարկութիւնն ու զարհուրանքը,
եւ առաքեց չարիքի պատգամաբերներ:

⁵⁰ Ճանապարհ հարթեց Իր բարկութեան առաջ,
նրանց կեանքը մահից չխնայեց,
ժանտախտի ձեռքը մատնեց նրանց կեանքը.

⁵¹ Հարուածեց Եգիպտոսի անդրանիկներին,
Քամի լաւագոյններին իրենց վրաններում:

⁵² Ոչխարների հօտի նման դուրս բերեց իր ժողովուրդին,
հօտի նման առաջնորդեց նրանց անապատ.

⁵³ յուսալիօրէն առաջնորդեց նրանց եւ չէին սարսափում,
եւ ծովը ծածկեց նրանց թշնամիներին:

⁵⁴ Բերեց նրանց իր Սրբութեան սահմանին,
Իր աջով տիրացած լեռանը.

⁵⁵ նրանց առջեւից վտարեց ժողովուրդներին,
սահմանելով նրանց տիրոյթի մասերը,
վրաններում բնակեցնելով Իսրայէլի տոհմերին:



⁵⁶ Բայց կրկին փորձեցին Աստուծոն,
ապստամբելով Բարձրեալի դէմ,
մերժելով պահպանել Նրա օրէնքները:

⁵⁷ Ինչպէս իրենց հայրերը, խոտորում էին ու դաւաճանում,
ձախողում էին թիւր աղեղի նման.

⁵⁸ բարձունքների պաշտամունքներով զայրացնում էին Նրան,
կուռքերով գրգռում էին Նրա նախանձախնդրութիւնը:

⁵⁹ Յայնժամ Աստուած լսեց եւ զայրացաւ,
խստօրէն հեռացրեց իրենից Իսրայէլին.

⁶⁰ լքեց Սելովի խորանը,
մարդկանց մէջ կանգնեցուած բնակատեղին.

⁶¹ բանտարկութեան մատնեց իր զօրութիւնը,
թշնամու ձեռքերին՝ իր փառքը:

⁶² Յանձնեց իր ժողովուրդը սրի,
զայրանալով իր ժառանգութեան դէմ.

⁶³ կրակը լափեց նրա երիտասարդներին,
նրա կոյսերը ամուսնութիւն չտեսան.

⁶⁴ նրա քահանաները սպանուեցին սրով,
նրա այրիները սուգ ու ողբ չարեցին:



⁶⁵ Տէրը քնից արթնացաւ,
ինչպէս գինուց թօթափուող մի ռազմիկ.

⁶⁶ Թիկունքից հարուածեց իր հակառակորդներին,
նրանց յաւիտեան ամօթով ծածկեց:

⁶⁷ Մերժեց Յովսէփի վրանը,
արհամարհեց Եփրեմի տոհմը.

⁶⁸ Յուդայի տոհմը ընտրեց,
Սիոն լեռը, որ սիրում է.

⁶⁹ Բարձրացրեց իր Սրբավայրը ինչպէս երկիրնքը,
այն յաւիտեան հաստատեց ինչպէս երկիրը:

⁷⁰ Եւ ընտրեց Դաւթին՝ իր ծառային,
վերցնելով նրան հօտերի ցանկապատի մօտից.

⁷¹ Հրամայեց նրան թողնել ոչխարներին,
դարձնելու համար նրան Յակոբի՝ իր ժողովուրդի,
Իսրայէլի՝ իր տիրոյթի հովիւը:

⁷² Նա եղաւ մաքուր սրտով հովիւ,
իմաստուն ձեռքով առաջնորդեց նրանց:



ԱՊՂԱՌԱ 79 [78]

Ազատիք մահուան դատապարտուածներին

Կցորդ. Ըստո՛ւա՛ծ, Գո՛ւ արդար ես, որ դատուեալ ես այսպէս,
որովհետեւ նրանի՛ն ինչպէս որ թերի ու մարգարէներ յարիւնը (Հմմտ. Յյտ 16, 5-6):

Կամ. Երո՛ւսաղէ՛մ, եթէ դո՛ւ նոյնպէս Հասկանայիր այսօր
խաղաղութեան ճանապարհը (Հմմտ. Ղկս 19, 42):

Կամ. Երո՛ւսաղէ՛մ որ նախկին է արո՛ւելո՛ւ ինչպէս նրանց ինչպէս,
մինչեւ որ կը լրանան ինչպէս նրանց ժամանակները (Ղկս 21, 24):

¹ Մաղմոս: Աստի:

Ո՛վ Աստուած, եկել են հեթանոսները,
մտել են տիրոյթիցդ ներս.
պղծել են Սրբութեանդ օթեւանը,
աւերակներ ինչպէս վերածել Երուսաղէմը:

² Ծառաներիդ դիակները թողեցին
որպէս կերակուր երկնքի գիշատիչներին,
հաւատացեալներիդ մարմինները՝ երկրի գազաններին.

³ արիւնը ջրի նման հեղեցին,
Երուսաղէմի չորսքոյրը չկայ այլեւս մէկը, որ թաղի:

⁴ Զոռանք ենք պատճառում մեր մօտիկներին,
ծաղր ու ծանակի առարկայ ենք սահմանակիցների համար.

⁵ մինչեւ ե՞րբ ես, Տէր, բարկացած մնալու,
մինչեւ ե՞րբ է խանդդ այրելու կրակի նման:

⁶ Զայրոյթդ հեթանոսների վրայ թափիր, որ Քեզ չեն ճանաչում,
թագաւորութիւնների վրայ, որ չեն կանչում Անունդ.

⁷ քանի որ լափեցին Յակոբին,
աւերեցին նրա բնակավայրը:

⁸ Մեր դէմ մի՛ յիշիր հայրերի մեղքը,
թող մեզ ընդառաջ ելնի Քո ողորմութիւնը,
որովհետեւ ծայր աստիճանի ենք հասել:

⁹ Օգնիր մեզ, Աստուած, մեր փրկութիւն,
Քո Անուան փառքի համար.
ազատիր մեզ եւ ներիր մեր մեղքերը,
Քո Անուան համար:

¹⁰ Ինչո՞ւ պիտի ասեն հեթանոսները.
«Ո՞ւր է նրանց Աստուածը».
Թող հեթանոսների մէջ ճանաչուի վրէժխնդրութիւնդ,
ծառաներիդ հեղուած արեան համար:

¹¹ Երեսիդ առաջ թող հասնի բանտարկեալի հեծեծանքը,
զօրութեանդ համաձայն՝ ազատիր մահուան դատապարտուածներին:

¹² Եօթնապատիկ աւելի թափիր մեր դրացիների գլխին
Քեզ հասցուած նախատինքը, ո՛վ Տէր:

¹³ Մենք՝ Քո ժողովուրդը եւ Քո արօտի հօտը,
երախտագիտութիւն կը մատուցենք Քեզ յաւիտեան,
սերնդից սերունդ կը պատմենք Քո գովքը:



ԱՊՂԱՌՈՒ 80 [79]

Աստուած, վերադարձրո՛ւ մեզ

Կցորդ. Եւ եմ ճշմարտի որ թափոնն էր, իսկ իմ Հայրը այգեգործն է (Յվհ 15, 1):

կամ. Եւ որ թափոնն էմ, իսկ դու՛ն՝ ոսկերը.

ով մնում է ինչնո՛ւմ, շաք պարտու է բերում (հմմտ. Յվհ 15, 5):

կամ. Դու՛ն չես՝ որ կրո՛ւմ ես արմատը, այլ արմատն է՝ որ կրո՛ւմ է ինչ (հմմտ. Հում 11, 18):

կամ. ԵնՀասարակութեան պարճառով՝ որո՞շ ճիշտը կորո՛ւնեն,

Բայց դու՛ն պարտաւոր ես մնում Հասարակ զօրութեամբ (հմմտ. Հում 11, 20):

կամ. Հոգին եւ Հարսը ասում են. « Ե՛՛կ »: Եւ ով Լսում է, թողասի. « Ե՛՛կ » (Յյտ 22, 17):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: «Շուշաններ»ի վրայ: Վկայութիւն:**
Աստի: Սաղմոս:

² Ունկն դիր, Իսրայէլի Հովիւ,
Դու՛ն որ հօտի նման առաջնորդում ես Յովսէփին
եւ քերովբէներից վեր՝ բազմում ես գահի վրայ:

³ Երազուր Եփրեմի, Բենիամինի, Մանասէի առաջ,
չուտով վերարթնացրու զօրութիւնդ
եւ եկ՝ բերելու մեզ փրկութիւնը:

⁴ Ո՛վ Աստուած, վերադարձրու մեզ,
Երազուր Դէմքդ եւ կը փրկուենք:

⁵ Տէր, տիեզերքի Աստուած,
մինչեւ ե՞րբ ես բարկացած մնալու
Քո ժողովուրդի աղօթքի դէմ:

⁶ Դու կերակրում ես մեզ արտասուքի հացով,
առատ արցունքներով յագեցնում ես մեր ծարաւը:

⁷ մեզ վէճի ես դնում մեր հարեւանների հետ,
մեր թշնամիները ծաղրում են մեզ:

⁸ Տիեզերքի Աստուած, վերադարձրու մեզ,
յայտնիր Դէմքդ եւ կը փրկուենք:

⁹ Խաղողի այգին, որ Եգիպտոսից փոխադրեցիր,
այն տնկեցիր՝ հեթանոսներին արտաքսելով:

¹⁰ Հողն ազատեցիր նրա համար,
արմատներ նետեց եւ լցրեց երկիրը:

¹¹ Նրա ստուերը ծածկում էր լեռները,
նրա ոստերը՝ ամենաբարձր մայրիները:

¹² Նրա ճիւղերը տարածուում էին մինչեւ ծովը,
նրա բողբոջները՝ Գետի ուղղութեամբ:

¹³ Ինչո՞ւ քանդեցիր նրա ցանկապատը,
նրա պտուղները քաղում են ճանապարհի անցորդները:

¹⁴ անտառի վարազը ապականում է այն,
այնտեղ արածում են դաշտերի դազանները:

¹⁵ Տիեզերքի Աստուած, վերադարձրու մեզ,
[յայտնիր Դէմքդ եւ կը փրկուենք]:

Նայիր երկնքից եւ տես,

¹⁶ այցելիր այս այգին եւ այն պաշտպանիր.
արմատը, որ Քո աջը տնկեց,
որդին, որին Քո համար հզօր դարձրիր:

¹⁷ ովքեր այն քանդեցին ու այրեցին,
մեռնելու են երեսիդ սպառնալիքի ներքոյ:

¹⁸ Ձեռքդ թող լինի աջ կողմիդ մարդու վրայ,
մարդու որդու վրայ, որին Քո համար հզօր դարձրիր:

¹⁹ այլեւս երբեք չենք հեռանալու Քեզնից,
վերապրեցրու մեզ եւ կը կանչենք Քո Անունը:

²⁰ Տէր, տիեզերքի Աստուած, վերադարձրու մեզ,
յայտնիր Դէմքդ եւ կը փրկուենք:



ԱՊՂԱՌՈՒ 81 [80]

Եթէ ժողովուրդս ինձ լսէր

Կցորդ. Առաջին պատճառներն սա է.

Լսիր, Իսրայէլ, մեր Տէր Աստուածը միակ Տէրն է (Հմմտ. Մրկ 12, 29):

կամ. Ա՛նրկրպագեա՛ն Տէր Աստուծուն եւ միմիայն՝ Նրան կը պաշտեա՛ն (Մտթ 4, 10):

կամ. Թող յետ մեջ Բաժանուած եւ անհասարակ յիշատակի,
որ հեռանում է կենդանի Աստուծոց (Հմմտ. Եբր 3, 12):

կամ. Ո՛վ անկանջ ունի, թող լսի այն՝ ինչ շնորհքն ասում է կենդանիներին (Յյտ 3, 22):

¹ *Երգչախմբի ղեկավարի համար: «Հնձաններ»ի վրայ: Ասափի:*

² *Ուրախ ցնծացէք Աստծոյ՝ մեր զօրութեան մէջ,
աղաղակեցէք դէպի Յակոբի Աստուածը.*

³ *Նուագեցէք, հնչեցրէք թմբուկները,
տաւղի ու քնարի մեղեդիները.*

⁴ *Հեփօր հնչեցրէք ամսուայ սկզբին,
լիալուսնին, որ մեր տօնական օրն է:*

⁵ *Սա հրաման է Իսրայէլի համար,
Յակոբի Աստծոյ վճիռն է.*

⁶ *Յովսէփի համար հաստատուած ուսուցում,
երբ դուրս եկաւ Եգիպտոսի երկրից:*

Անծանօթ խօսքեր եմ ես այժմ լսում.

⁷ *«Ուսերիցդ վերցրեցի բեռը,
ձեռքերդ վար դրին ծանրութիւնը.*

⁸ *Նեղութեան մէջ կանչեցիր ինձ եւ փրկեցի քեզ,
պատասխանեցի քեզ, որոտման մէջ թաքնուած,
փորձեցի քեզ Մերիբայի ջրերի մօտ:*

⁹ *Լսիր, ժողովուրդ իմ, աղաչում եմ քեզ,
ո՛վ Իսրայէլ, եթէ դու լսէիր ինձ.*

¹⁰ *Հպէտք է քեզնում մէկ ա՛յլ աստուած լինի,
չպէտք է պաշտես մի օտար աստծոյ:*

¹¹ *Ես, Տէրը, քո Աստուածն եմ,
քեզ դուրս բերեցի Եգիպտոսի երկրից.
բացիր բերանդ եւ ես կը լցնեմ այն:*

¹² *Բայց ժողովուրդս չի լսում իմ ձայնը,
Իսրայէլը չի կամենում հնազանդուել ինձ.*

¹³ *Նրան լքում եմ իր կարծրացած սրտին,
եւ թող գնայ, ըստ իր կամքի:*

¹⁴ *Ա՛հ, եթէ ժողովուրդս լսէր ինձ,
եթէ Իսրայէլն ընթանար իմ ճանապարհներով.*

¹⁵ *մէկ ակնթարթում կը ստորացնէի իր թշնամիներին,
կեղեքողների վրայ կ'ուղղէի իմ ձեռքը:*

¹⁶ *Թշնամիներս կ'ընկնէին նրա առաջ,
սա կը լինէր նրանց ճակատագիրն ընդմիշտ.*

¹⁷ *կը կերակրէի նրան պարարտ ցորենով,
ժայռի մեղրով կը յագեցնէի նրան»:*



ԱՊՂԱՌԱ 82 [81]

«Գուգ աստուածներ էք»

Կցորդ. Մաշտոցի եւ Կոնստանտնուպոլսի

որբերին ու այրիներին օգնութեան հասնելն է (Հմմտ. Յկբ 1, 27):

կամ. Չեր Տերը երկնից՝ մե եւ Նորանում շկայ կողմակալութիւնն (Հմմտ. Եփս 6, 9):

կամ. Մի՛ գտարե՛վ ըստ արտաբնի՛նի, այլ գտարե՛վ արդար գտարաստանով (Յվհ 7, 24):

¹ Մաղմոս: Ասափի:

Աստուած նախագահում է աստուածային հաւաքին,
Նա դատում է աստուածներին մէջ.

² «Մինչեւ ե՞րբ էք կողմնակալութեամբ դատելու,
նպաստելու՝ ամբարիշտների դատին:

³ Պաշտպանեցէք տկարին ու որբին,
արդարութիւն արէք աղքատին ու կարիքաւորին.

⁴ ազատեցէք տկարին ու խեղճին,
խլեցէք նրանց ամբարիշտների ձեռքից»:

⁵ Չեն հասկանում եւ չեն կամենում կշռադատել,
քայլում են խաւարի մէջ.
սասանուել են երկրի հիմքերը:

⁶ «Ասել էի. Դուք աստուածներ էք,
դուք բոլորդ՝ Բարձրեալի որդիներ.

⁷ այնուամենայնիւ, մեռնելու էք մարդու պէս,
ընկնելու էք՝ ինչպէս բոլոր հզօրները»:

⁸ Ոտքի ել, Աստուած, եւ դատիր երկիրը,
Քեզ են պատկանում բոլոր հեթանոսները:



ԱՊՂԱՌԱ 83 [82]

Աստուած, համը մի՛ մնա

Կցորդ. Հասարակ ժայռի վրայ եմ հաստոցելու՝ իմ Նկեղեցին
եւ գոթի՛ն գունեքը շէն կարողանալու՝ յաղթահարել նրան (Հմմտ. Մտթ 16, 18):

կամ. Մա՛ ո՛վ Գալու՝ է, իր ցորենը հասա՛վելու՝ ե շտեմարանում,
ինչ թե՛ ինչ այրելու՝ ե անձար կրակով (Հմմտ. Մտթ 3, 12):

¹ Երգ: Մաղմոս: Ասափի:

² Համը մի՛ մնա, ո՛վ Աստուած,
ո՛վ Աստուած, մի՛ մնա խոլ ու անշարժ.

³ տե՛ս, թշնամիներդ աղմկում են,
հակառակորդներդ գլուխ են բարձրացնում:

⁴ Քաղտնի դաւում են Քո ժողովուրդի դէմ,
դաւում են ընդդէմ Քո ընտրեալների.

⁵ նրանք ասում են. «Արմատախիլ անենք նրանց իբրեւ ժողովուրդ,
թող մոռացութեան մատնուի Իսրայէլի անունը»:

⁶ Միասին խորհում են համաձայնութեամբ,
դաշինք են կնքում Քո դէմ:

⁷ Եդոմի եւ Իսմայէլի վրանները,
Մովաբիներն ու Հագարիները:

⁸ Գեբաղն, Ամոնն ու Ամաղէկը,
փղշտացիները Տիւրոսի ժողովուրդի հետ:

⁹ Ասուրը նոյնպէս դաշնակից է նրանց,
Թիկունք է Ղովաի որդիներին:

¹⁰ Արա նրանց ինչպէս Մադիանին ու Սիսարային,
ինչպէս Յաբինին՝ Կիսոնի հեղեղատում:

¹¹ Երբ ջախջախուեցին Դովրայում,
դառնալով երկրի պարարտանիւթ:

¹² Ոչնչացրու նրանց գլխաւորներին ու նրանց մեծերին,
ինչպէս Օրէբին ու Ջէբին, Ջէբէէին ու Սաղմանային:

¹³ Նրանք, որ գոչում էին. «Մեզ է պատկանում,
մեզ է պատկանում Աստծոյ ժառանգութիւնը»:

¹⁴ Չոր ճիւղերի նման դարձրու նրանց, Աստուած իմ,
քամուց ցիրուցան արուած թեփի նման:

¹⁵ Ինչպէս կրակը, որ այրում է անտառը,
ինչպէս հրդեհը, որ կիզում է լեռները:

¹⁶ Այսպէս հետապնդիր նրանց Քո մրրիկով
եւ խռովիր նրանց Քո փոթորիկով:

¹⁷ Անարգութեամբ ծածկիր նրանց երեսը,
կը փնտռեն Քո Անունը, Տէր:

¹⁸ Վախով բռնուած ու սարսափահար,
ստորացած, կը մեռնեն ընդմիջտ:

¹⁹ Կ'իմանան, որ Քո Անունը Տէր է,
միայն Դու ես Բարձրեալը ամբողջ երկրի վրայ:



ԱՊՂԱՌԱ 84 [83]

Երանի՛ նրան՝ ով բնակուում է Քո յարկի ներքոյ

Կցորդ. Մնայուն վաղա՛ շոնեն՛ վայսբեղնեթ՛եթեոմ,
այլ փնորոմ են՛ զալ՛ զաղա՛ը (Եբբ 13, 14):

Կամ. Երբ յեղհամար արեղ պարբասարաթ կը լինեմ,
կը կեն կը զամ եւ կը զերցնեմ յեղին՛ զեթ (Յվհ 14, 3):

Կամ. Մախընարոմ են՛ գորս գալմարմնից եւ քնակոմեւ Տերոջ մօթ (2Կր 5, 8):

Կամ. Փնորեցե՛ զերին իրականոմիւնները,
որ Քրիստոս նարաթ է Աստոյ աջ կողմոմ (Կղս 3, 1):

Կամ. Յափշարակոմեւ են՛ ընդառաջ ելնեւոմ համար Տերոջը
եւ այսպէս միշտ լինեւոմ են՛ Տերոջ զեթ (հմմտ. 1Թս 4, 17):

¹ Երգչախմբի ղեկավարի համար: «Հնձաններ»ի վրայ: Կորիսի որդիների:
Սաղմոս:

² Քանի՛ցս սիրելի են Քո օթեւանները,
տիեզերքի Տէր:

³ Հոգիս մաշուում է ու փափաքում
լինել Տիրոջ հետ.
սիրտս ու մարմինս ցնծում են
կենդանի Աստուծոյ մէջ:

⁴ Ճնճողուկը նոյնպէս գտնում է մի տուն, ո՛վ Տէր,
տատրակը՝ իր բոյնը.
ուր կարող է զնել իր փոքրիկներին, Թագաւոր իմ եւ Աստուած իմ,
մօտ՝ Քո խորաններին:

⁵ Երանի՛ նրան՝ ով բնակուում է Քո յարկի ներքոյ,
անվերջ կարող է օրհնել Քեզ:

⁶ Երանի՛ նրան՝ ով Քեզնում ունի իր ուժը,
իր սրտում ունի Քո ճանապարհները:

⁷ Ծարաւի հովտի միջով անցնելիս
բխեցնում է մի աղբիւր.
այն ծածկում է իր օրհնութիւններով,
գարնանային անձրեւների նման:

⁸ Քայլելու է վերանորոգ կորովով,
բնակուելու համար Սիոնում, Աստուծոյ առջեւ:

⁹ Տէր, տիեզերքի Աստուած, ընդունիր իմ աղօթքը,
լսիր, Յակոբի Աստուած:

¹⁰ ո՛վ Աստուած, հայիր նրան՝ ով մեր վահանն է,
հայիր Քո Մեսիայի երեսին:

¹¹ Քո մօտ անցկացուած միայն մէկ օրը
աւելի արժէ՛ քան հազարն այլուր.
նախընտրում եմ իմ Աստուծոյ օթեւանի
չեմին մնալ,
քան հիւրընկալուել
ամբարշտութեան վրաններից ներս:

¹² Տէր Աստուած սիրում է ողորմութիւն եւ ճշմարտութիւն,
տալիս է շնորհ եւ փառք.
Տէրը բարիք չի մերժում նրան՝
ով ընթանում է ամբժութեան մէջ:

¹³ Երանի՛ նրան՝ ով Քեզնում է հաստատում իր վստահութիւնը,
Տէր, տիեզերքի Աստուած:



Կցորդը. Երբ Հասաւ ժամանակներն լրո՛ւմը,
 Ըստրուած առաջից Իր Որդո՛ւն, որ շնո՛ւեց կնոջից (Գղտ 4, 4):

Կամ. Քրիստոս իր մարմնո՛ւմ կրեց մեր մեղքե՛րը,
 որպէ՛ս յի մեն՛կ ապրելն ին՛կ արդարո՛ւթեան Համար (Հմմտ. 1Պտ 2, 24):

Կամ. Օրեն՛վը մեղարո՛ւեց Մո՛վսէսի կողմից,
 իսկ շնորհն ու ճշմարտո՛ւթեանը՝ Յիսուս Քրիստոսի (Հմմտ. Յվհ 1, 17):

1 Երգչախմբի ղեկավարի համար: Կորինի որդիների: Սաղմոս:

² Դու, Տէր, մշտապէս սիրում ես Քո երկիրը,
 վերադարձնում ես Յակոնի աքսորուածներին.

³ Դու կրում ես Քո ժողովրդի մեղքը,
 ջնջում ես նրա ամբողջ յանցանքը.

⁴ Ես ես քաշում Քո ամբողջ ցասումը,
 դադարեցնում ես բուռն բարկութիւնդ:

⁵ Դէպի մեզ վերադարձիր, Աստուած, փրկութիւն մեր,
 եւ խաղաղեցրու մեր դէմ ունեցած զայրոյթդ.

⁶ միշտ բարկացած ես լինելու մեր դէմ,
 ընդմի՞շտ մնալու ես զայրացած:

⁷ Մի՞թէ չես վերադառնալու՝ կրկին տալու Համար մեզ կեանք,
 այլեւս չի՞ ուրախանալու Քեզնով Քո ժողովուրդը.

⁸ ցոյց տուր մեզ Քո սէրը, Տէր,
 եւ պարգեւիր մեզ Քո փրկութիւնը:

⁹ Ես լսում եմ Աստծոյ խօսքը.
 Տէրն աւետարանում է խաղաղութիւն
 իր ժողովրդին, իրեն երկրպագողներին,
 եթէ չվերադառնան իրենց խենթութեանը.

¹⁰ փրկութիւնը մօտ է նրան՝ ով երկնչում է Նրանից,
 փառքը բնակուելու է մեր երկրում:

¹¹ Հանդիպելու են սէրն ու ճշմարտութիւնը,
 Համբուրուելու են խաղաղութիւնն ու արդարութիւնը.

¹² ճշմարտութիւնը ծլարձակելու է երկրից,
 երկնքից երեւալու է արդարութիւնը:

¹³ Յայնժամ Տէրը կը տայ բարութիւնը,
 մեր երկիրը կը տայ իր պտուղը.

¹⁴ արդարութիւնը գնալու է Նրա առջեւից,
 իր քայլերի հետքերով՝ փրկութիւնը:



Կցորդ. Օրհնեալ է Աստուած եւ Հայրը մեր Տէր Յիսուս Քրիստոսի,
որ միջնորդութեամբ մեզ մեր թուր նեղութիւններում (Հմմտ. 2Կր 1, 3-4):

Կամ. Ես մահացել էի, թայց այժմ ապրում եմ յաւեր,
եւ ունեմ մահուան ու դժոխքի թանաքները (Հմմտ. Յյտ 1, 18):

¹ Աղօթք: Դաւթի:

Ականջ դիր, Տէր, պատասխանիր ինձ,
որովհետեւ աղքատ եմ ես ու խեղճ.

² պաշտպանիր ինձ, Աստուած իմ, հաւատարիմ եմ,
փրկիր ծառայիդ, որ հաւատում է Քեզ:

³ Ողորմիր ինձ, ո՛վ Տէր,
դէպի Քեզ եմ աղաղակում ամբողջ օրը.

⁴ ուրախացրու ծառայիդ գոյութիւնը,
Քեզ եմ ընծայում, Տէր, իմ կեանքը:

⁵ Դու բարի ես, Տէր, եւ ընդունակ ես ներելու,
ով կանչում է Քեզ, նրա համար լի ես սիրով.

⁶ լսիր իմ աղօթքը, Տէր,
ուշադիր եղիր աղաչանքներիս ձայնին:

⁷ Տրտմութեանս օրը աղաղակում եմ Քեզ,
վստահ եմ, կը պատասխանես ինձ, Տէր.

⁸ քանի որ աստուածների մէջ ոչ ոք Քեզ նման չէ
եւ ոչինչ հաւասար չէ Քո արարքներին:

⁹ Ժողովուրդները, որ կազմաւորեցիր, Տէր Աստուած,
գալու են՝ պաշտելու Քո երեսը.
ճանաչելու են Անուանդ փառքը,

¹⁰ որովհետեւ միայն Դու ես մեծ եւ գործում ես հրաշքներ:

¹¹ Սովորեցրու ինձ, Տէր, Քո ճանապարհը,
կը կարողանամ քայլել ճշմարտութեանդ մէջ.
պարգեւիր ինձ մի պարզ սիրտ,
որ երկնչի Քո Անունից:

¹² Երախտագիտութիւն եմ յայտնում Քեզ, Տէր իմ Աստուած, ամբողջ սրտով,
յաւէտ փառաւորելու եմ Անունդ.

¹³ մեծ է Քո սէրը իմ հանդէպ,
կը խլես ինձ դժոխքի խորքերից:

¹⁴ Ո՛վ Աստուած, գոռոզ անձինք յարձակում են վրաս,
բռնաւորների մի ոհմակ դաւում է ինձ,
Քեզ ոչնչով հաշուի չեն առնում:

¹⁵ Բայց Դու, Տէր, ողորմած եւ կարեկցող Աստուած,
դանդաղ՝ բարկութեան մէջ, մեծ՝ սիրով ու հաւատարմութեամբ,

¹⁶ դարձիր դէպի ինձ եւ ողորմիր ինձ,
եւ ծառայիդ պարգեւիր Քո ուժը:

Փրկիր աղախնուդ որդուն,

¹⁷ բարութեան մի նշան դարձրու ինձ.
Թշնամիներս, ստորացած, կը տեսնեն,
որ Դու, Տէր, օգնում եւ մխիթարում ես ինձ:



ԱՊՂԱՌՈՒ 87 [86]

Քեզնում են մեր ակունքները

Կցորդ. Ապար է եւ մեր մայրն է. վերին Երոսաղէմը (Հմմտ. Գղտ 4, 26):

կամ. Ուրախացէ՛ք, որովհետեւ յեր անոնները Գրոսաթ են երկնէն (ՂԿս 10, 20):

կամ. Չկայ այլեւս ո՛չ Ըրեայ, ո՛չ յոյն,

այլ որով թողորդ մեկ է՛ք Քրիստոս Յիսուս (Հմմտ. Գղտ 3, 28):

կամ. Եթէ որով պարկանում է՛ք Քրիստոսին, ուրեմն Աբրահամին զաւակ է՛ք (Գղտ 3, 29):

կամ. Գո՛ւր ո՛չ օրարականներ է՛ք, ո՛չ եւճիւրեր,

այլ որ թերի Համաճաղակիցներն է՛ք (Եփս 2, 19):

կամ. Մօրեցեւէ՛ք Սին լեռանը, կենդանի Ասրածոյ ճաղակին,

երկնային Երոսաղէմին (Եբբ 12, 22):

կամ. Քաղաքի պարիսպներն ունեն քառերկուս Հիմէք,

որոնց վրայ Գրոսաթ են Առաքեալների անոնները (Հմմտ. Յյտ 21, 14):

¹ **Կորնի որդիների: Սաղմոս: Երգ:**

Քանի որ հաստատուած է Սրբութեան լեռների վրայ,

² Տէրը սիրում է Սինի դռները,

աւելի՛ քան Յակոբի միւս բոլոր օթեւանները.

³ փառաւոր բաներ են քո մասին պատմում,

ո՛վ Աստծոյ քաղաք:

⁴ «Ռահաբն ու Բաբելոնը դասում եմ

նրանց շարքում՝ ովքեր ճանաչում են ինձ.

ահա փղշտացիները, Տիւրոսն ու Եթովպիան.

Իւրաքանչիւրը ծնուել է այնտեղ»:

⁵ Իսկ Սինի համար հռչակուելու է.

«Մէկը եւ միւսը ծնուել են նրանում,

Բարձրեալն ինքը այն հաստատուն է պահում»:

⁶ Տէրը գրում է ժողովուրդների գրքում.

«Իւրաքանչիւրը ծնուել է այնտեղ».

⁷ եւ բոլորը միասին պարելու են, երգելով.

«Քեզնում են մեր ակունքները»:



Կցորդ. Յիսուս աղաղակեց .

« Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ – Լիւթեր ինչ » (Հմմտ. Մտթ 27, 46):

Կամ. Մեր վրայ ընդունել են իմ մահուան պատասխան ,
ինչն էր « մեղշ վարածելս օվորելու – Համար (2Կր 1, 9):

Կամ. Յիսուսի ծանօթները կանգնած էին Հեռուում,
նաեւ կանայ՛վ՝ որ Հեթեոսում էին նրան (Հմմտ. ՂԿս 23, 49):

Կամ. Ես եմ յարո՞ւել նրա եւ կեանքը .
« օվ Հասարակ է ինչ , նոյնիսկ ելել մահանայ , կ'ապրի (Յվհ 11, 25):

¹ **Երգ: Սաղմոս: Կորնի որդիների: Երգչախմբի ղեկավարի համար:
«Պարեր»ի վրայ: Եղանակելիք: Մասիլ: Եման Եզրայէլացու:**

² Փրկուիթեանս Տէր Աստուած,
դիչեր ու ցերեկ աղաղակում եմ Քո առաջ .

³ աղօթքս թող հասնի մինչեւ Քեզ,
ականջ դիր իմ հեծեծանքին:

⁴ Կեանքս յագեցած է չարիքներով,
դժոխքին այլեւս մօտ է կեանքս .

⁵ դասուում եմ նրանց շարքում, ովքեր իջնում են փոսի մէջ,
այլեւս առանց ուժերի մի մարդ եմ:

⁶ Լքուած եմ ննջեցեալների մէջ,
ինչպէս գերեզմանի մէջ դրուած սպանուածները .
նրանց մէջ՝ ում այլեւս չես յիշում,
ովքեր բացառուած եւ հեռու են Քո ձեռքից:

⁷ Նետեցիր ինձ փոսի յատակը,
խաւարի մէջ, անդնդի խորքում .

⁸ իմ վրայ կշռում է ցասմանդ ծանրութիւնը,
Դու ինձ ընկղմում ես Քո բոլոր յորձանքներով:

⁹ Հեռացնում ես ինձնից իմ ծանօթներին,
ինձ նրանց համար դարձրել ես մի զազրանք .
արգելափակուած եմ, առանց ելքի ուղիների,

¹⁰ աչքս վշտակրութիւնից սպառուել է:



Ամբողջ օրն աղաղակում եմ Քեզ, Տէր,
դէպի Քեզ եմ բարձրացնում իմ ձեռքերը .

¹¹ մի՞թէ հրաշքներ կը գործես ննջեցեալների համար,
մի՞թէ նրանց ստուերները ոտքի կը կանգնեն՝ օրհնելու Քեզ:

¹² Գերեզմանում կը պատմուի՞ սէրդ,
հաւատարմութիւնդ՝ կորստեան վայրում .

¹³ հրաշքներդ կը ճանաչուե՞ն խաւարում,
արդարութիւնդ՝ մոռացութեան երկրում:

¹⁴ Բայց ես կանչում եմ Քեզ, Տէր,
առաւօտեան կը հասնի Քեզ իմ աղօթքը.

¹⁵ Ինչո՞ւ ես, Տէր, լքում ինձ,
ինչո՞ւ ես ինձնից թաքցնում Դէմքդ:

¹⁶ Տարաբախտ, մահամերձ եմ մանկութիւնիցս ի վեր,
ուժասպառ՝ արհաւիրքներով ծանրութեան ներքոյ.

¹⁷ Իմ վրայով անցաւ բարկութիւնդ,
յարձակումներդ քայքայեցին ինձ:

¹⁸ Ամբողջ օրը պաշարում եմ ինձ ջրի յորձանքի նման,
միասին յարձակում եմ վրաս.

¹⁹ Դու հեռացնում ես ինձնից մտերիմներիս ու ընկերներիս,
միայն խաւարն է ընկերակցում ինձ:



ԱՂԱՄՈՒ 89 [88]

Ռաթից չեմ հեռացնի իմ սէրը

¹ Մասէիլ: Եթան Եզրայէլացու:

89ա

Քասայ Ռաթին՝ Իմ ծառային

Կցորդ. Մեն՛ի սովորել են՛ի օրէն՛ից, որ Քրիստոս մեռա՛ւ յաւեց (Յվհ 12, 34):

կամ. Խոսքման Համայն, Դաւթի սերնդից

Ասորուած Իսրայէլի Համար յարուցեց մի ժողով: Յիսուսը (Հմմտ. Գրծ 13, 23):

կամ. Ասորուած նրան գալու է Դաւթի՝ իր Հօր Գահը,

Եւ նրա Դագաւորութիւնը վախճան չի ունենալու երթել (Հմմտ. Ղկս 1, 32-33):

² Յաւիտեան երգելու եմ Տիրոջ սէրը,
սերնդից սերունդ աւետարանելու եմ Քո հաւատարմութիւնը.

³ Եւ ասում եմ. «Մի յաւիտենական սէր է,
հաւատարմութիւնդ երկնքից առաւել հաստատուն է»:

⁴ «Մի դաշինք կնքեցի իմ ընտրեալի հետ,
երգում տուի Դաւթին՝ իմ ծառային.

⁵ Ընդմիջտ կը հաստատեմ քո սերունդը,
կը պատրաստեմ քեզ մի գահ, որ տեւի յաւէտ»:



⁶ Երկինքը երգում է Քո հրաշքը, Տէր,
սրբերի հաւաքը մեծարում է Քո հաւատարմութիւնը.

⁷ ո՞վ է հաւասար Տիրոջը երկնքում,
ո՞վ է նման Տիրոջը աստուածների մէջ:

⁸ Աստուած փառաւորուած է սրբերի հաւաքում,
մեծ եւ ահարկու է նրանց մէջ՝ ովքեր շրջապատում են Իրեն.

⁹ ո՞վ է Քեզ նման, տիեզերքի Տէր Աստուած,
հաւատարմութեամբ գօտեպնդուած, քանիցս հզօր ես, Տէր:

¹⁰ Դու իշխում ես ծովի հպարտութեանը
եւ հանդարտեցնում ես նրա փոթորկալի ալիքները.

¹¹ Դու ոտնակոխ ես անում Ռահաբին պարտուածի նման,
հզօր բազուկով ցիրուցան ես անում թշնամիներին:

¹² Քեզ են պատկանում երկինքն ու երկիրը,
աշխարհը եւ նրա լիութիւնը, որ կազմաւորեցիր.

¹³ Հիւսիսն ու հարաւը, որ Դու ստեղծեցիր,
Թաբօրն ու Հերմոնը ցնծում են Քո Անուամբ:

¹⁴ Այո՛, բազուկդ հզօր է,
ուժեղ է ձեռքդ, Քո աջը՝ վեհ.

¹⁵ արդարութիւնն ու իրաւունքը գահիդ յենարաններն են,
չնորհն ու ճշմարտութիւնը քայլում են Քո առջեւից:

¹⁶ Երանի՛ ժողովուրդին՝ որ ճանաչում է Քո գովքը
եւ քայլում է երեսիդ լոյսի ներքոյ.

¹⁷ ամբողջ օրը ցնծում է Անուամբդ,
պարծենում է արդարութեամբդ, Տէր:

¹⁸ Դու ես մեր զօրութեան պայծառութիւնը,
սիրոյդ համաձայն՝ աւելացրու մեր կորովը.

¹⁹ այո՛, Տիրոջն է մեր վահանը,
մեր Մեսիա Թագաւորը՝ Իսրայէլի Սրբինը:



²⁰ Մի ժամանակ խօսեցիր Քո մտերիմներին,
տեսիլքի մէջ ասացիր նրանց.
«Բարեհաճութիւնս շնորհել եմ մի ընտրեալի,
ժողովրդի մէջ բարձրացրել եմ մի պատանի:

²¹ Գտայ Դաւթին՝ Իմ ծառային,
սրբութեան իւղովս օծեցի նրան.

²² ձեռքս միշտ լինելու է նրա հետ,
բազուկս լինելու է նրա ուժը:

²³ Թշնամին չի կարողանալու խաբել նրան,
նրան չի խոնարհեցնելու այլասերուած մարդը.

²⁴ կը հարուածեմ իր հակառակորդներին իր առաջ,
կը յարձակուեմ նրան ատողների վրայ:

²⁵ Հաւատարմութիւնս եւ սէրս իր հետ են,
Անունս կ'աւելացնի նրա կորովը.

²⁶ կը տարածեմ նրա ձեռքը մինչեւ ծովը,
մինչեւ Գետը կը հասնի նրա աջը:

²⁷ Ինձ կանչելու է. Դու իմ Հայրն ես,
Իմ Աստուածը եւ ժայռը իմ փրկութեան.

²⁸ նրան կը կարգեմ որպէս իմ առաջնեկը,
բարձրագոյնը՝ երկրի թագաւորներէ մէջ:

²⁹ Յաւիտեան կը պահեմ նրան իմ սէրը,
իր հետ կնքած դաշինքս չի լուծարուի երբեք:

³⁰ յաւիտեան կը հաստատեմ իր որդուն,
նրա գահը կը տեւի որքան երկիրնքը:

³¹ Եթէ իր գաւազները կը լքեն իմ օրէնքը,
չպահպանելով իմ վճիռները:

³² Եթէ կը խզեն իմ կամքը,
պղծելով իմ պատուիրանները:

³³ Գաւազանով կ'այցելեմ նրանց յանցանքին,
աղէտներով՝ նրանց մեղքին:

³⁴ Բայց իրենից չեմ հեռացնի իմ սէրը,
չեմ դաւաճանի իմ հաւատարմութեանը:

³⁵ չեմ ջնջի իմ դաշինքը,
չեմ փոխի իմ շուրթերի խոստումը:

³⁶ սրբութեանս մէջ երդուեցի մէկընդմիշտ,
այս իսկ պատճառով, չեմ ստի 'Դաւթին:

³⁷ Նրա որդին մնալու է յաւէտ,
նրա գահն իմ առջեւ՝ ինչպէս արեւը:

³⁸ ինչպէս լուսինը, յաւիտեան հաստատուած
երկնքում, հաւատարմութեան վկայ»:

ՅՈՐՃՅՈՐՃՅՈՐՃ

89ր

Ո՛ր Է, Տէր, Քո նախկին սէրը

Կցորդ. Մենք չարուում ենք խաշուած Քրիստոսին:

Արեաների Ասմար Գայթակղոթիւն, Աւթանոսների Ասմար յեմարոթիւն (1Կր 1, 23):

Կամ. Ըստ Կարտեյ այն՝ ինչ նախապէս ասեցելէր:

Իր Քրիստոսը պէտք է շարշարուէր (Հմմտ. Գրծ 3, 18):

Կամ. Գրուած է. Քրիստոսը պէտք է շարշարուէր

եւ երրորդ օրը յարոթիւն առնի մեռելներէ (ՂԿս 24, 46):

³⁹ Ո՛վ Աստուած, Դու մերժեցիր Քո Մեսիային,
արհամարհեցիր նրան, բարկանալով նրա դէմ:

⁴⁰ Լուծարեցիր ծառայիդ հետ կնքուած դաշինքը,
ցեխի մէջ պղծեցիր նրա թագը:

⁴¹ Կործանեցիր նրա բոլոր պարիսպները,
աւերակ դարձրիր նրա ամրոցները:

⁴² այն կողոպտեցին ճանապարհի բոլոր անցորդները,
ծաղրանք է դարձել դրացիների համար:

⁴³ Բարձրացրիր նրա հակառակորդների աջը,
ուրախացրիր նրա բոլոր թշնամիներին:

⁴⁴ Բթացրիր նրա սրի բերանը,
նեցուկ չեղար նրան պատերազմում:

⁴⁵ Վախճան դրիր նրա փառքին,
չըջեցիր, գետին նետեցիր նրա գահը:

⁴⁶ Ընդհատեցիր նրա երիտասարդութեան օրերը,
անարգութիւն հեղեցիր վրան:

⁴⁷ Մինչեւ ե՞րբ ես թաքնուելու, Տէր,
ընդմիշտ բոցավառուելո՞ւ է գայրոյթդ:

⁴⁸ Երչիր՝ թէ որքան կարճ է իմ կեանքը,
որքան դիւրաբեկ ես ստեղծել իւրաքանչիւր մարդու:

⁴⁹ Ո՞վ կարող է ապրել եւ մահ չտեսնել,
ո՞վ կարող է խուսափել դժոխքի ձեռքից:

⁵⁰ Ո՞ւր է, Տէր, Քո նախկին սէրը,
որ հաւատարմութեամբ երդուեցիր Դաւթին:

⁵¹ Երչիր, Տէր, ծառաներիդ կրած նախատինքը,
ծոցումս կրում եմ ժողովուրդների մի բազմութիւն:

⁵² Թշնամիներդ հայհոյում են, Տէր,
հայհոյում են Մեսիայիդ քայլերը:

⁵³ Յաւիտեան օրհնեալ է Տէրը:
Ամէն: Ամէն:



Վերջ Սաղմոսների Երրորդ Գրքի

